ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՖԱՔՍԻՄԻԼԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ և ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12

ք.Երևան

«19» 01 2021թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Հովհաննիսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ֆաքսիմիլային սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.
Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7	Հասցե՝ Բագրատունյաց 25/27
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ
900011054013	ՀՀ 1510032344900100
02647057	ՀՎՀՀ 02228296
Էդգար Գեվորգյան	Անժելիկա Հովհաննիսյան
----------	----------
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«19» 01 2021թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

անվանումը և գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության* h/h	տեխնիկական բնութագիրը	չ/մ	առավելագույն միավոր ծառայության արժեք (ՀՀ դրամ)	առավելագույն ընդամենը գումար /ՀՀ դրամ/	արդյունքի հանձնման վայրը	կատարման ժամկետը
Ֆաքսիմիլայի ն սարքերի վերանորոգմ ան և պահպանման ծառայություն ներ CPV 50311260/501	**1. Կատարողը պետք է իրականացնի HP մակնիշի քարթ-րիջների**				4 500 000	1. Մ. Խորենացու փ. թիվ 3, 7 և 7ա 2. Հյուսիսային փ. 6 3. Աիարոնյան 12/3 4. Արարատյան 90 5. Սևանի 104/2 6. Կոմիտաս 35 7. Դեղատան-3 8. Շինարարներ 3/1 9. Մանթաշյան-55 10. Մոլդովական 41/3 11. Ծով. Իսակովի պող. թիվ 10 12. Ծով. Իսակովի պող. թիվ 10/16 13. «Զվարթնոց» օդանավակայան, Երևան 42 14. Անդրանիկի 37/1 15. Սասունցի Դավթի 87 և 87ա 16. ք. Աշտարակ, Պռոշյան 29 17. ք. Արտաշատ, Օգոստոսի 23, փող. 83 18. ք. Էջմիածին, Նար դոսի 11 19. ք. Գավառ, Հերոս քաղաք Նովոռոսսիյսկի փող. 4 20. ք. Սևան, Սայաթ-Նովա 1/1 21. ք. Մարտունի Շահումյան 2 22. ք. Վանաձոր, Վարդանանց 11	Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխ ան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխ ան համաձայնագրի կնքման հիման վրա և համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 345 օրացուցային օրվա ընթացքում
	1.1	լիցքավորում	դրամ	2700			
	1.2	թմբուկի վերանորոգում		300			
	1.3	կառատրոնի վերանորոգում		300			
	1.4	ռաքելի վերանորոգում		300			
	1.5	դոզատորի վերանորոգում		300			
	1.6	մագնիսական գլանի վերանորոգում		300			
	1.7	թմբուկի փոխարինում նորով		300			
	1.8	չիպի փոխարինում նորով		300			
	1.9	մագնիսական գլանի փոխարինում նորով		300			
	2. Կատարողը պետք է իրականացնի Canon մակնիշի քարթրիջի						
	2.1	լիցքավորում	դրամ	2700			
	2.2	թմբուկի վերանորոգում		300			
	2.3	կառատրոնի վերանորոգում		300			
	2.4	ռաքելի վերանորոգում		300			
	2.5	դոզատորի վերանորոգում		300			
	2.6	մագնիսական գլանի վերանորոգում		300			
	2.7	թմբուկի փոխարինում նորով		300			
	2.8	չիպի փոխարինում նորով		300			
	2.9	մագնիսական գլանի փոխարինում նորով		300			
	3. Կատարողը պետք է իրականացնի Xerox մակնիշի քարթրիջի						

3.1	լիցքավորում	դրամ	900		23. ք. Ալավերդի, Թումանյան 1ա 24. ք. Տաշիր, Կալինինի թաղ.-6 25. ք. Վանաձոր Մոսկովյան փ. թիվ 44 և 42ա 26. ք. Հրազդան, Սպանդարյան-24/1-24/2 27. ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ 1 28. ք. Գյումրի, Հովսեփյան 1 29. ք. Գյումրի Մ. Խորենացի 21 30. ք. Գյումրի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 31. «Շիրակ» օդանավակայան 32. ք. Կապան, Ռ. Մինասյան 20ա 33. ք. Սիսիան, Սիսական-41գ 34. ք. Մեղրի, Անդրանիկի-2/11 35. գ. Շաքե, Սիսիան-Երևան մայրուղու 7-րդ կմ 36. գ. Կարճևան Մայրուղի-4 37. ք. Գորիս Տաթևացի 9 38. ք. Եղեգնաձոր, Նարեկացի-8/3 39. ք. Իջևան, Անկախության 12 40. գ. Բագրատաշեն 19 փող թիվ 69 41. ք. Նոյեմբերյան, Երևանյան 4 42. Արևելյան մաքսատուն, գ. Գոգավան 43. Արևելյան մաքսատուն-վարչություն ք. Այրում, Երկաթուղային 20 44. Հյուսիսային մաքսատուն, գ. Բավրա Գյումրի-Նինոծմինդա մայրուղի 63/4	
3.2	թմբուկի վերանորոգում		300			
3.3	կառատրոնի վերանորոգում		300			
3.4	ռաքելի վերանորոգում		300			
3.5	դոզատորի վերանորոգում		300			
3.6	մագնիսական գլանի վերանորոգում		300			
3.7	թմբուկի փոխարինում նորով		300			
3.8	չիպի փոխարինում նորով		300			
3.9	մագնիսական գլանի փոխարինում նորով		300			
4. Կատարողը պետք է իրականացնի Samsung մակնիշի քարթրիջի						
4.1	լիցքավորում	դրամ	900			
4.2	թմբուկի վերանորոգում		300			
4.3	կառատրոնի վերանորոգում		300			
4.4	ռաքելի վերանորոգում		300			
4.5	դոզատորի վերանորոգում		300			
4.6	մագնիսական գլանի վերանորոգում		300			
4.7	թմբուկի փոխարինում նորով		300			
4.8	չիպի փոխարինում նորով		300			
4.9	մագնիսական գլանի փոխարինում նորով		300			
5. Կատարողը պետք է իրականացնի Pantum մակնիշի քարթրիջի						
5.1	լիցքավորում	դրամ	6000			
5.2	թմբուկի վերանորոգում		300			
5.3	կառատրոնի վերանորոգում		300			
5.4	ռաքելի վերանորոգում		300			
5.5	դոզատորի վերանորոգում		300			
5.6	մագնիսական գլանի վերանորոգում		300			
5.7	թմբուկի փոխարինում նորով		300			
5.8	չիպի փոխարինում նորով		300			
5.9	մագնիսական գլանի փոխարինում նորով		300			
6. Կատարողը պետք է իրականացնի KYOCERA մակնիշի քարթրիջի						
6.1	լիցքավորում		6000			
6.2	թմբուկի վերանորոգում		300			
6.3	կառատրոնի վերանորոգում		300			
6.4	ռաքելի վերանորոգում		300			
6.5	դոզատորի վերանորոգում		300			
6.6	մագնիսական գլանի վերանորոգում		300			
6.7	թմբուկի փոխարինում նորով		300			
6.8	չիպի փոխարինում նորով		300			

		6.9	մագնիսական գլանի փոխարինում նորով		300			
		7.	**Կատարողը պետք է իրականացնի Epson մակնիշի քարթրիջի**					
		7.1	լիցքավորում	դրամ	150			
		7.2	թմբուկի վերանորոգում		300			
		7.3	կառատրոնի վերանորոգում		300			
		7.4	ռաքելի վերանորոգում		300			
		7.5	դոզատորի վերանորոգում		300			
		7.6	մագնիսական գլանի վերանորոգում		300			
		7.7	թմբուկի փոխարինում նորով		300			
		7.8	չիպի փոխարինում նորով		300			
		7.9	մագնիսական գլանի փոխարինում նորով		300			
			Հանրագումարային գումարը		**36 150**			
			Կատարողի առաջարկած հանրագումարային գին		**21 000**			

*** Ընթացակարգն իրականացվում է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի 6-րդ մասի:**

***** Ծառայությունները մատուցվում են ըստ պատվիրատուի պահանջի:***

****** Կատարման ժամկետը սահմանվում է պատվիրատուի կողմից պահանջի ներկայացման օրվանից հաշված 3 օրացույցային օրվա ընթացքում, ընդ որում Պատվիրատուի կողմից առաջին պահանջը կարող է ներկայացվել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված ոչ շուտ քան 20 օրացույցային օր հետո, եթե Մատակարարի կողմից համաձայնություն չի տրվում ավելի կարճ ժամկետի:***

****** Վերանորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերը և նյութերը տրամադրում է ծառայություն մատուցող կազմակերպությունը, որոնց արժեքը պետք է ներառվի միավոր ծառայության մատուցման արժեքի մեջ: Ընդ որում վերանորոգման ենթակա սարքավորումների տեղափոխումն ու վերադարձը իրականացվում է ծառայություն մատուցող կազմակերպության կողմից:**

******* Վճարումն իրականացվում է փաստացի մատուցված ծառայության դիմաց:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011054013
02647057
Էդգար Գեվորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ
Հասցե՝ Բագրատունյաց 25/27
Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ
ՀՀ 1510032344900100
ՀՎՀՀ 02228296
Անժելիկա Հովհաննիսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
« 19 » 02 2021թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
« 19 » 02 2021թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն